ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 919 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի հունվարի 31-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երեխաների առողջության վերականգնման և որոշ հիվանդություն-ների բուժման ժամանակակից մեթոդների ներդրում» համալիր ծրագրի մասին» N 37-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «10 հունվարի 2020 թ. - 31 դեկտեմբերի 2024 թ.» բառերը փոխարինել «2020 թվականի հունվարի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով.

2) 9-րդ կետում «2020 մարտ - 2024 հոկտեմբեր», «2020 ապրիլ - 2024 դեկտեմբեր» և «2020 հունվար - 2024 դեկտեմբեր» բառերը համապատասխանաբար փոխարինել «2020 թվականի մարտի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը», «2020 թվականի ապրիլի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» և «2020 թվականի հունվարի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով.

3) 11-րդ կետում «2024 թ.» բառերը փոխարինել «2024 – 2025 թվականներ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ